



Հայաստանի Համահայկական Հիմնադրամի
գործադիր վարչություն

Hayastan All-Armenian Fund
Executive Board

ՀՀ, Երևան 0010, Կառավարական 3-րդ մասնաշենք,
Հայաստանի համահայկական հիմնադրամ
Հասարակութան հետ կապերու բաժին
Հեռ: + (374 10) 521505

pr@himmadram.org

www.himmadram.org

Մամուլի հաղորդագրություն

«Հայաստան» համահայկական հիմնադրամը ջրաբաշխման համակարգ կառուցելու նոր նախագիծ կ'իրագործե ԼՂՀ Հադրութի շրջանի երեք գիւղերու մէջ

Երևան, 03 ապրիլ, 2009թ.: «Հայաստան» հիմնադրամը սկսած է Հադրութի շրջանի Մեծ Թաղլար, Ազոխ եւ Դրախտիկ գիւղերուն մէջ ջրաբաշխման համակարգ կառուցելու նախագիծը: Ծրագիրը կ'իրականացուի Հիմնադրամի Ֆրանսայի տեղական մարմնի եւ ԼՂՀ կառավարութեան հովանաւորութեան ներքոյ:

Մեծ Թաղլար, Ազոխ եւ Դրախտիկ գիւղերուն մէջ իրագործուող վերոյիշեալ ծրագիրը կը նախատեսէ կառուցել Իշխան գետի վրա ջուրի ներթող անցք, գտիչ եւ ջրամշակման սարք: 22 քմ երկարութիւն ունեցող ջրատարէն գատ, գիւղերուն մէջ պիտի կառուցուին ջրաւազաններ՝ բաշխարար ջրհորներով, ջուրը գիւղերուն հաւասար չափերով բաժնելու նպատակով: Ծրագիրը կը նախատեսուի աւարտել դեկտեմբերին:

«Խմելու ջուր հայթայթելով գիւղացիին, մենք նպատակ ունինք ապահովել եւ կայունացնել անոր ապագան», - նշեց «Հայաստան» հիմնադրամի գործադիր տնօրէնի պաշտօնատար Արա Վարդանեանը:

«Գիւղը միշտ ունեցեր է Խմելու ջուրի խնդիր: Աւելի քան 200-ամեայ աղբիւրները կը ցամքին տաք ամիսներուն եւ գիւղացին կը յայտնուի անլուծելի խնդրի մը առջեւ», - յայտնեց Թաղլար համայնքի ղեկավար Վլատ Դանիէլեանը:

Մեծ Թաղլար, Ազոխ եւ Դրախտիկ համայնքները ԼՂՀ բարձրագոյն գյուղերէն են, ուր կը բնակի մօտ 2750 մարդ: Տարեց բնակիչները համայնքներուն յետագայ գոյատեւումը եւ զարգացումը կը կապեն ջուրի խնդրի լուծման հետ:

«Հայաստան» համահայկական հիմնադրամը շահոյթ չհետապնդող կազմակերպութիւն է, որը հիմնադրուած է 1992թ-ին, որուն նպատակն է խթանել մարդասիրական գործունեութիւնը եւ տարբեր հաստատութիւններու եւ կառոյցներու մասնաճիւղերու զարգացումը ՀՀ-եան եւ ԼՂՀ-եան մէջ: Հիմնադրամը ունի 15 տեղական մարմին ամբողջ աշխարհի մէջ: